



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. սեպտեմբերին /վերլուծություն/

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12987 գործարքներ, որոնց քանակը 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել է 37.7%-ով, իսկ 2007թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 10.8%-ով:

2007թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5105 օտարման գործարքների 84.7% կազմել են առուվաճառքները, 14.6%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.6%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.8% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2007թ. սեպտեմբերին, 2007թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 10.0%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 25.2%-ով:

2007թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.0% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.7%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.4%-ով:

2007թ. սեպտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	սեպտեմբեր 2006թ.	սեպտեմբեր 2007թ.	օգոստոս 2007թ.
Կենտրոն	396600	455800	454800
Արաբկիր	312700	377100	376600
Քանաքեռ-Զեյթուն	195000	282700	282200
Նոր-Նորք	179600	242800	234300
Ավան	169400	237200	228200
Էրեբունի	162100	243700	237600
Շենգավիթ	191100	254100	251100
Դավթաշեն	203200	267600	259400
Աջափնյակ	180700	248000	247300
Մալաթիա-Մեքաստիա	173900	236900	231200
Նուբարաշեն	112600	127400	127400
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>207000</b>	<b>270300</b>	<b>266400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. սեպտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. օգոստոսի համեմատ աճել են 1.5%-ով:

2007թ. սեպտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 530 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. օգոստոսի համեմատ նվազել է 10.8%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 9.3%-ով:

2007թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2006թ.	սեպտեմբեր 2007թ.	օգոստոս 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	72600	110900	110900
	Ապարան	26500	29000	28600

	Թային	26600	38600	38600
Արարատ	Արտաշատ	58000	89000	89000
	Մասիս	66800	103200	101200
	Վեդի	47000	65100	62600
	Արարատ	45100	57700	57700
Արմավիր	Վաղարշապատ	93900	132500	132500
	Արմավիր	63700	99800	98100
	Մեծամոր	44000	63100	63100
Գեղարքունիք	Սևան	44300	67200	66000
	Գավառ	29100	36100	36100
	Մարտունի	38800	54200	53900
	Վարդենիս	21000	26300	26300
	Ճամբարակ	13200	15300	15300
Լոռի	Վանաձոր	56100	76400	76400
	Ստեփանավան	26000	39300	39300
	Սյիսակ	40300	47500	46300
	Ալավերդի	21100	26800	26800
	Տաշիր	20800	27000	26200
	Թումանյան	5400	5400	5400
	Շամլուղ	3000	3100	3000
	Ախթալա	10900	12000	11600
Կոտայք	Աբովյան	109200	150200	150200
	Նոր Հաճն	74300	106700	106700
	Բյուրեղավան	53000	76400	76400
	Եղվարդ	69700	96800	95100
	Հրազդան	41400	55700	54100
	Ծաղկաձոր	76800	105600	98600
	Չարենցավան	46700	66000	65700
Շիրակ	Գյումրի	52800	75600	74300
	Արթիկ	34800	47500	46800
	Մարալիկ	21600	25700	25700
Սյունիք	Գորիս	52500	75100	75100
	Կապան	52400	70700	70700
	Սիսիան	44700	55100	55100
	Մեղրի	33600	40800	39800
	Ագարակ	20900	25800	25400
	Քաջարան	28300	37100	33700
	Դաստակերտ	6800	7000	6800
Վայոց Ձոր	Վայք	42400	64600	63300
	Եղեգնաձոր	63400	80100	80100
	Ջերմուկ	72500	114600	112600
Տավուշ	Դիլիջան	52300	72000	72000
	Իջևան	62900	94400	94400
	Բերդ	30500	35000	34500
	Նոյեմբերյան	23100	28800	28800
	Այրում	18000	21000	21000

2007թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. օգոստոսի համեմատ աճել են 1.1%-ով:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 590 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 175, մյուս մարզերում միասին վերցրած՝ 415: 2007թ. օգոստոսի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 1.0%-ով, ընդ որում

Երևանում աճել՝ 13.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 6.1%-ով: 2006թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 29.1%-ով, ընդ որում Երևանում՝ 38.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 25.4%-ով:

2007թ. սեպտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	սեպտեմբեր 2006թ.	սեպտեմբեր 2007թ.	օգոստոս 2007թ.
Կենտրոն	397900	472300	471800
Արաբկիր	314200	390500	389800
Քանաքեռ-Զեյթուն	196100	287200	286200
Նորք-Մարաշ	189900	243000	238900
Ավան	170600	242700	234900
Էրեբունի	163200	249100	240100
Շենգավիթ	192300	259800	256600
Դավթաշեն	204600	272600	263200
Աջափնյակ	182200	254800	250500
Մալաթիա-Սեբաստիա	175700	240200	235100
Նուբարաշեն	114200	131400	129800
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>209200</b>	<b>276700</b>	<b>272400</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. սեպտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. օգոստոսի համեմատ աճել են 1.6 %-ով:

2007թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2006թ.	սեպտեմբեր 2007թ.	օգոստոս 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	74100	115700	113500
	Ապարան	27900	33500	33300
	Թալին	27600	42300	41200
Արարատ	Արտաշատ	59300	93900	91600
	Մասիս	68100	106700	103200
	Վեդի	48000	66900	65100
Արմավիր	Արարատ	46400	62700	62200
	Վաղարշապատ	95900	137600	134800
Արմավիր	Արմավիր	65300	102000	99900
	Սևան	45400	69200	68100

	Գավառ	30200	40100	39700
	Մարտունի	40200	56500	56500
	Վարդենիս	22500	30600	30500
	Ճամբարակ	14800	18700	18500
Լոռի	Վանաձոր	58000	82500	79400
	Ստեփանավան	27700	43200	41700
	Սյիտակ	41300	50800	49800
	Ալավերդի	22200	29900	29900
	Տաշիր	21900	29000	28700
	Թումանյան	7000	8600	8500
	Շամլուղ	4300	5700	5700
	Ախթալա	12400	15000	15000
Կոտայք	Արոլյան	111200	156300	155100
	Նոր Հաճն	75300	112800	110700
	Բյուրեղավան	54100	79500	79100
	Եղվարդ	71000	99700	97700
	Հրազդան	42500	58600	56800
	Ծաղկաձոր	78000	153400	144800
	Չարենցավան	47900	70100	67700
Շիրակ	Գյումրի	54000	81200	78400
	Արթիկ	35800	50400	49500
	Մարալիկ	24100	28900	28700
Սյունիք	Գորիս	54100	80500	78900
	Կապան	53400	75000	72700
	Միսիան	45700	58300	57200
	Մեղրի	34600	43000	41800
	Ագարակ	22000	27800	27000
	Դաստակերտ	8800	9700	9700
Վայոց Ձոր	Վայք	43400	66300	65100
	Եղեգնաձոր	64600	84200	82500
	Ջերմուկ	38700	60600	58500
Տավուշ	Դիլիջան	53500	76400	74400
	Իջևան	64100	98800	96500
	Բերդ	31400	38400	36600
	Նոյեմբերյան	23900	33400	31400
	Այրում	19200	22800	22000

2007թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. օգոստոսի համեմատ աճել են 2.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2007թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 2022 միավոր /1919.22 հա/ հողեր, որից Երևանում՝ 160 միավոր /17.33 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 103 միավոր /9.07 հա/ հողեր, որից Երևանում՝ 54 միավոր /3.26 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 803 միավոր /1813.23 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.10 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 799 միավոր /68.47 հա/, որից Երևանում՝ 103 միավոր /8.22 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 382 միավոր /24.88 հա/, որից Երևանում՝ 49 միավոր /7.08 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 21 միավոր /4.06 հա/, որից Երևանում՝ 7 միավոր, /1.93 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 17 միավոր /8.58 հա/:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1905 միավորի /1889.55 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 154 միավոր /16.97 հա/, նվիրատվության գործարքներ՝ 103 միավորի /27.48 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.08 հա/ և փոխանակության գործարքներ՝ 14 միավորի /2.20 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.28 հա/:

Հանրապետությունում 2007թ. սեպտեմբերին, 2006թ. սեպտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 25.5%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 39.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 3.5 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 711.64 հա, որից 698.10 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 39.1% կամ 745 գործարքներ /1335.84 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 50 գործարքներ /7.88 հա/, իսկ 60.1% կամ 1145 միավորը /551.12 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 97 միավոր /9.07 հա/:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 15 գործարք /2.59 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2007թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Չետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	3	1.33	20	1.59	27	4.96	1	0.10	4	0.60	78	6.30	14	2.07
Արագածոտն	65	566.18	1	0.47	10	1.36	16	1.17	58	55.18	0	0.00	48	4.24	9	0.05
Արարատ	9	99.65	2	0.33	20	1.75	26	0.67	73	35.37	0	0.00	78	6.51	1	0.20
Արմավիր	65	448.66	2	0.06	7	0.46	21	0.66	98	249.44	1	0.03	137	11.88	5	0.44
Գեղարքունիք	12	13.27	0	0.00	20	0.86	25	3.47	14	11.76	0	0.00	9	2.44	2	0.54
Լոռի	8	22.09	0	0.00	13	1.13	33	0.43	54	33.77	0	0.00	12	1.26	11	0.04
Կոտայք	84	110.37	4	0.41	14	1.35	89	5.08	137	75.66	0	0.00	195	17.61	12	0.84
Շիրակ	8	6.37	2	0.75	30	0.83	15	0.42	13	10.02	1	0.03	7	0.29	2	0.04
Սյունիք	4	6.85	1	0.05	1	0.02	21	1.10	10	8.11	0	0.00	2	0.16	4	0.07
Վայոց Ձոր	10	24.67	0	0.00	4	0.51	15	0.25	6	1.91	0	0.00	6	0.62	1	0.003

Տավուշ	6	1.38	0	0.00	13	1.06	7	0.03	21	8.29	0	0.00	15	1.22	4	1.63
Ընդամենը	271	1299.49	15	3.40	152	10.92	295	18.24	485	489.61	6	0.66	587	52.53	65	5.92

Ստորև ներկայացվում է 2007թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	32	2.93	3	1.33	8	0.37	21	1.23	18	4.94	0	0.00	0	0.00	12	1.22	6	3.72
Արագածոտն	1	0.03	0	0.00	0	0.00	1	0.03	91	569.16	65	566.18	1	0.47	10	1.36	15	1.15
Արարատ	7	0.06	0	0.00	1	0.01	6	0.05	50	102.34	9	99.65	2	0.33	19	1.74	20	0.62
Արմավիր	7	0.042	1	0.002	0	0.00	6	0.04	87	449.53	64	448.39	1	0.06	7	0.46	15	0.62
Գեղարքունիք	5	1.57	0	0.00	0	0.00	5	1.57	52	16.03	12	13.27	0	0.00	20	0.86	20	1.90
Լոռի	2	0.06	0	0.00	0	0.00	2	0.06	52	23.59	8	22.09	0	0.00	13	1.13	31	0.37
Կոտայք	14	0.96	1	0.05	4	0.26	9	0.65	176	114.26	83	108.37	3	0.36	10	1.10	80	4.43
Շիրակ	4	0.09	0	0.00	1	0.03	3	0.06	51	8.29	8	6.37	2	0.75	29	0.81	12	0.36
Սյունիք	4	0.59	0	0.00	0	0.00	4	0.59	23	7.42	4	6.85	1	0.05	1	0.02	17	0.50
Վայոց Ձոր	2	0.09	0	0.00	0	0.00	2	0.09	27	25.34	10	24.67	0	0.00	4	0.51	13	0.16
Տավուշ	10	0.17	0	0.00	4	0.15	6	0.02	15	2.16	5	1.22	0	0.00	9	0.92	1	0.02
Ընդամենը	88	6.59	5	1.38	18	0.82	65	4.39	642	1323.06	268	1297.06	10	2.02	134	10.13	230	13.85

Հանրապետությունում 2007թ. սեպտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք /2.44 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. սեպտեմբերին 2006թ. սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 38.9%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 25.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 42.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 31.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել՝ 6.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 2.0 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 5.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. սեպտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը		Մակերեսը /հա /		արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը		Մակերեսը /հա /		արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/
Արագածոտնի մարզ										

Աշտարակ	57	493.43	40.5	808.5	156.3	35	32.48	362.2	6772.5	2762.7
Ապարան	6	62.67	26.8	269.1	77.3	14	10.37	90.6	767.6	375.5
Թային	2	10.08	34.8	250.0	142.4	2	1.76	90.6	758.5	400.2
Ծաղկահովիտ						6	9.00	77.0	948.2	175.0
Արարատի մարզ										
Արտաշատ						30	21.71	335.1	5418.0	1501.5
Մասիս	2	7.00	32.5	504.6	268.5	16	4.49	181.1	6772.5	1889.5
Վեդի	7	92.65	31.7	282.7	211.3	26	8.94	203.8	4515.0	1282.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	17	103.55	28.8	1059.2	156.6	28	17.22	294.3	4063.5	953.8
Բաղրամյան	21	312.77	22.6	35.4	25.8	15	190.88	90.6	677.3	587.7
Վաղարշապատ	26	32.07	36.2	879.9	501.3	49	37.92	443.7	9030.0	1611.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	2.72	106.8	236.3	156.0	1	0.83	190.2	496.7	372.4
Ճամբարակ	1	0.05	372.0	372.0	372.0			45.3	541.8	153.8
Մարտունի	1	0.15	1155.0	1155.0	1155.0	5	1.52	45.3	1806.0	478.0
Սևան	1	2.00	494.8	494.8	494.8	3	3.18	45.3	451.5	196.4
Վարդենիս	6	8.34	303.5	341.5	317.9	5	6.23	27.2	532.8	254.3
Լոռու մարզ										
Ալավերդի						31	15.89	163.0	2483.3	1100.6
Գուգարք	8	22.09	194.3	403.0	292.5	6	2.55	226.4	2709.0	950.5
Սպիտակ						2	0.42	226.4	1490.0	521.0
Ստեփանավան						6	0.81	90.6	2257.5	369.6
Տաշիր						3	4.07	45.3	451.5	208.7
Կոտայքի մարզ										
Արովյան	35	48.37	36.8	932.7	417.7	74	21.06	271.7	11287.5	3500.7
Եղվարդ	44	56.50	40.9	1216.0	303.3	43	38.30	172.1	11287.5	2450.2
Հրազդան	4	3.50	142.5	1525.0	793.7	15	14.25	113.2	2709.0	976.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	1.42	147.1	314.6	230.9	5	4.29	249.0	1693.1	459.4
Ամասիա								36.2	237.0	117.6
Անի						3	3.31	108.7	361.2	248.7
Աշոցք								45.3	165.0	116.8
Արթիկ	6	4.95	128.7	355.8	276.4	5	2.42	63.4	1083.6	174.6
Սյունիքի մարզ										
Գորիս						6	7.65	90.6	673.3	343.5
Կապան	4	6.85	180.0	194.1	183.5			54.3	841.6	227.5
Մեղրի						4	0.46	181.1	1784.2	498.4
Սիսիան								45.3	631.2	232.9
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	24.41	35.4	928.0	168.7	6	1.91	117.7	2524.8	1308.3
Վայք	3	0.26	46.1	299.4	203.8			54.3	1430.7	521.3
Տավուշի մարզ										
Բերդ						3	0.51	45.3	841.6	360.0
Իջևան	4	0.51	413.2	579.8	481.9	6	3.68	240.0	1683.2	826.9
Նոյեմբերյան	1	0.71	407.5	407.5	407.5	12	4.11	45.3	3509.5	537.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. սեպտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.



Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	9	13100.0	174.5	179.0	176.9	43	37132.0	113.2	3612.0	2333.5
Ապարան	1	457.0	122.1	122.1	122.1	4	3980.0	113.2	632.1	198.8
Թալին						1	1319.0	45.3	361.2	97.2
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	3	3200.0	113.8	270.0	165.9	14	15735.0	135.8	2709.0	895.5
Մապիս	16	14170.0	121.4	276.0	265.7	51	37040.0	135.8	9030.0	1154.3
Վեդի						12	11880.0	113.2	993.3	648.8
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						25	27796.0	135.8	2257.5	1110.5
Բաղրամյան						3	2340.0	81.5	270.9	135.0
Վաղարշապատ	7	4644.0	1008.0	3828.0	3205.9	108	86971.0	135.8	4515.0	1465.3
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						4	14202.0	135.8	903.0	360.0
Ճամբարակ						2	3589.0	45.3	135.5	98.2
Մարտունի	19	8000.0	113.1	113.8	113.4	1	1940.0	90.6	451.5	240.2
Սևան	1	600.0	434.8	434.8	434.8	1	1770.0	90.6	903.0	153.7
Վարդենիս						1	2940.0	45.3	225.8	112.1
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						5	7000.0	67.9	270.9	127.9
Գուգարք	12	10692.0	3223.3	10900.0	5363.2	5	4331.0	67.9	2347.8	552.3
Սպիտակ						1	680.0	63.4	451.5	126.4
Ստեփանավան	1	600.0	277.2	277.2	277.2	1	600.0	45.3	270.9	105.6
Տաշիր								45.3	135.5	68.1
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	7	9182.0	276.0	1543.5	509.2	80	65240.0	135.8	6772.5	1792.4
Եղվարդ	1	800.0	1621.3	1621.3	1621.3	94	91530.0	135.8	6772.5	1925.9
Հրազդան	2	1000.0	421.7	9912.5	5167.0	19	16560.0	135.8	9030.0	1254.4
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	12	3159.0	277.4	3571.4	2251.6	5	1420.0	113.2	1535.1	326.4
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի								67.9	180.6	98.6
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	17	4902.0	52.5	900.0	401.1	2	1430.0	67.9	925.6	163.1
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								67.9	541.8	235.1
Կապան	1	220.0	5363.6	5363.6	5363.6			67.9	632.1	201.5
Մեղրի						2	1570.0	67.9	406.4	118.1
Սիսիան								67.9	406.4	136.1
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	4	5100.0	277.3	376.2	326.8	6	6169.0	67.9	1128.8	295.1
Վայք								77.0	632.1	120.1
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								45.3	632.1	85.8
Իջևան	9	9168.0	79.2	2200.0	1322.0	14	11177.0	67.9	1354.5	414.5

Նոյեմբերյան					1	1000.0	45.3	632.1	130.1
-------------	--	--	--	--	---	--------	------	-------	-------

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք 0.05 հա մակերեսով՝ Գեղարքունիքի մարզում:

2007թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 765 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.9%: Ընդ որում, վարձակալության գործարքների 33.7% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. սեպտեմբերին 2007թ. օգոստոսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 14.4%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 47.7%-ով:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 45 բնակարանների, 24 անհատական բնակելի տների, 243 հասարակական, 46 արտադրական նշանակության օբյեկտների, 403 միավոր /1080.07 հա/ հողերի և 4 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների /այդ թվում 14 միավոր /1.69 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. օգոստոսի համեմատ նվազել է 52.4%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 66.7%-ով:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 1080.07 հա հողերից 4.00 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1076.07 հա հողերի 0.35 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 13.37 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 462.52 հա, որից 444.80 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 262.17 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. սեպտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	150.00	5	8.50
Արարատ	0	0.00	15	33.35
Արմավիր	0	0.00	1	2.00
Գեղարքունիք	7	62.17	63	382.63
Լոռի	0	0.00	58	158.39
Կոտայք	0	0.00	14	6.77
Շիրակ	0	0.00	79	142.92
Սյունիք	1	50.00	3	26.06
Վայոց Ձոր	0	0.00	5	4.34
Տավուշ	0	0.00	1	3.96
<b>Ընդամենը</b>	<b>9</b>	<b>262.17</b>	<b>244</b>	<b>768.92</b>

2007թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2130 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.4%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. օգոստոսի համեմատ նվազել է 10.4%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 97.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.0%/, առանձնատների /26.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /8.9%/ և հողերի /11.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 824 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. օգոստոսի համեմատ նվազել է 15.6%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 43.8%-ով:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 1186.49 հա հողեր, որից 5.81 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 98.8% կամ 1172.62 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում 0.16 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 950.80 հա, որից 950.61 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 5 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. օգոստոսի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 22.2%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 26.7%-ով: 2007թ. սեպտեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 2 միավոր՝ Երևանում, 4 միավոր՝ Գեղարքունիքի մարզում, 3 միավոր՝ Շիրակի մարզում, 1-ական միավոր՝ Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

2007թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2333 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. օգոստոսի համեմատ նվազել է 5.6%-ով, իսկ 2006թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 46.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /41.3%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***